## ԳԱՒԱԶԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ.

Յետ մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորեաց 'ի Բաբելոն՝ Սելեւկիոս՝ ամս ԼԱ. Անտիոքոս Սօտեր՝ ամս ԺԹ. Անտիոքոս Թէոս՝ ամս ԺԱ. (յաւուրս սորին) ապստամբեցան Պարթեւք 'ի Մակեդոնացւոցն. քանզի նախ քաջն Արշակ 'ի զաւակէն Աբրահամու՝ 'ի Քետուրական ծննդոցն էր, որ թագաւորեաց 'ի Պալխ՝ ամս ԼԱ. և ապա որդին նորա Արտաշէս՝ ամս ԻԶ. և ապա որդի նորա Արշակ մեծ՝ ամս ԳԺ. որ եկն և սպան զԱնտիոքոս Թէոսն, եւ եղբայր իւր Վաղարշակ՝ հիւսիսոյ և արեւմտեան աշխարհիս թագաւոր կացոյց. և որդւոց յորդիս՝ վասն եղբօրն Արշակայ, կոչեցան Արշակունիք: Վաղարշակ այր քաջ և խոհեմ, սահմանեաց կարգս արքունական, Նախարարական, Նահապետական՝ կողմնակալաց՝ ազգաց օճախից*)

(*) Տոհմ, զարմ.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան